



## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 20-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում, Իջման ա. սեղանի մոտ, տեղի ունեցավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի շրջանավարտ Գևորգ արկ. Գյուլգյույանի քահանայակոչման կարգը, խարտավիլակությամբ Ս. Նարեկ քհն. Մատարյանի: Նորընծան խոստացավ «չամձն առնուլ և կատարել զամենայն հրամանս արքոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»: Արարողության ավարտին ընծայալը արտասանեց Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»:

Փետրվարի 22-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Վազգեն եպս. Քեչիշյանը: Ա. պատարագի ընթացքում պատարագիչ արքայան հայրը կատարում է բարեշնորհ Գևորգ սարկավագի քահանայական կոչման ու ձեռնադրության արքայան արարողությունը: Նորընծան բարձրացնելով ձեռքերը, հրաժարվում է աշխարհիկ կյանքից: Ապա, ըստ «Ձեռնա-

դրության Մաշտոց»-ի, ստանում է քահանայական փիղոն և պատարագի զգեստներ: Ձեռնադրող արքայանը արքայույս մեռնով օծում է քահանայական լիով զգեստավորության մեջ գտնվող նորընծայի ճակատը, վերանվանելով Օշական քահանա: Օծումից հետո Ս. Օշական քահանային տրվում է սկիհ ու մաղգմա՝ ի նշան պատարագ մատուցելու իշխանության:

Օրվա հանդիսավոր արարողության առթիվ բովանդակալից քարոզ է խոսում արքայան հայրը:

### ՎԱԶԳԵՆ ԵՊՍ. ՔԵՇԻՇՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն»:

«Ձգույշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յորում եղ զձեզ Հոգին Սուրբ տեսուչը՝ հովուել զժողովուրդս Տեառն» (Գործք. Ի 28):

«Գործք առաքելոցի» մեջ այսպէս կրպատգամե Առաքյալը բոլոր անոնց, որոնք կկոչվին հոգևոր ծառայության: Իսկ Պետրոս Առաքյալ իր թոռլթին մեջ կըսէ. «Վերակացու լինել մի՛ իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ» (Ա. Պետրոս Ե 2): Այսօր, այս սուրբ սեղանին առջև ինչ որ կատարվեցավ, գերագույն պատիվն էր, որ տրվեցավ ընծայալին: Պատիվներու ամենեւն ազնվականը՝ ըլլալ ծառա Աստուծոյ,



Մի պահ ճանաչվում էր արարողությունը

ըլլալ հովիվ և առաջնորդ ժողովուրդին: Ընծայալիս հոգեկան բարձրագույն արժեքներու ձգտումը և Սուրբ Հոգիի շնորհները ընկալելը վսեմ հոգիի արտահայտությունն է:

Սուրբ Հոգիի շնորհքով լեցված նորընծան պիտի ծառայե Աստուծոյ և հայ ժողովուրդին, որ իրեն պիտի հանձնաւի: Ծառայության այս վսեմ ճանապարհի ընթացքին զգույշ պետք է ըլլալ, ըստ Սոսանայի, որովհետեւ իր խնամքին հանձնված յուրաքանչյուր անհատին համար իրմէ հաշիվ պիտի պահանջվի, մանաւանդ իր իսկ անձին համար: Հետևաբար իր անձը օրինակ պետք է հանդիսանա բանավոր հոտին: Աստուծոյ կամքով, և ոչ թէ ակամա, զանոնք հովվէ և առաջնորդէ դէպի դպար մարգագետիններ, դէպի հաւիտենական փրկություն, դէպի Աստուծոյ արքայությունը:

Այս պահուն բոլորս ալ վկայեցինք Գեւորգ սարկավագի ընծայաբերումը հովիտենական և սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնի այս նվիրական Իջման սուրբ սեղանին առջև: Այս ալ ուրիշ ներշնչում մըն է իրեն, որովհետեւ այս Սուրբ Մեղանին վրա ծունկի եկած են մեր եռամեծ հայրապետներն ու տեսապաշտ վարդապետները, որոնք իմաստությամբ, նվիրումով և անձնագործությամբ տեր են կանգնած իրենց հոտին և անոր հոգեկան արժեքներուն և զանոնք դէպի խաղաղություն առաջնորդած են արհաւիրքներու մեջեն: Չկա ավելի մեծ պատիվ ուխտավորի մը, եթէ ոչ այս նվիրական վայրին վրա ծունկի գալ և ուխտել՝ ծառայելու Աստուծոյ, ծառայելու մեր սքանչելի ժողովուրդին:

Երբ Մովսէս կոտենար Սինայի լեռան անկեզ մորենիին, Աստված խոսեցաւ և ըսաւ՝ «Սուրբ է վայրը, հետևաբար համէ կոչիկները»: Սուրբ է Էջմիածինը, և երբ մենք ծունկ կ'դնենք անոր խորանին առջև, պետք է մերկացնենք մեր հոգիները շահաւիրութենէ, ընչաքաղցութենէ, ազահութենէ և նեղամտութենէ և լեցնենք, նորոգենք մարդասիրությամբ, ողորմածությամբ, անարատությամբ, հեզությամբ, սիրով, բարեսիրությամբ, արդարությամբ և ժուկակությամբ: Ըլլանք նոր մարդ, լեցված Սուրբ Հոգիով և հայրապետներու օրինակով:

Այսօր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. առաքելաշաւիղ կաթողիկոսի բացառիկ արտոնությամբ Գևորգ սարկավագ ծնրադրեց մեր առջև՝ ուխտելու ըլլալ քաջ հովիվ, բարի հովիվ, որ իր անձը պիտի նվիրաբերէ անկաշատորեն, անձանձիրորեն իր ժողովուրդին: Մենք աղոթեցինք և երգեցինք, որպէսզի աստվածային և երկ-

նավոր շնորհը առատորեն իջնէ իր վրա, դարձնէ զինք նոր մարդ, մոռնալով իր անցյալը՝ իր ուխտին մեջ լեցվի Սուրբ Հոգիի շնորհքով: Գևորգ սարկավագը, վերածնած Օշական արեւա, կարենա իր հոգին լեցնել նաև Օշականի մեջ հանգչող Սուրբ Մեսրոպի ոգիով: Անոր անան նվիրաբերել իր անձը իր ժողովուրդին հոգևոր և ազգային ծառայության սուրբ գործին: Մեր ժողովուրդին պարտադրանքն է այս իր եկեղեցականին վրան դրված: Եկեղեցականը պետք է զգա, հաղորդվի և ներշնչվի իր պատմությամբ, անցյալով և լիցքավորված նայի ապագային՝ պայծառ աչքով, անխարդախ և ուղիղ դատամտով: Ոչ մէկ շիւ հաշիվ, ոչ մէկ անպարկեշտ մտածում և կամ ընթացք զինք շեղեցնէ իր ուխտեն: Դարերու երկայնքին և մինչև այսօր անոնք, որոնք եկեղեցական ասպարեզը ընդունած են որպէս զգեստ, կորսված են դարերու փոշիին մեջ, իսկ անոնք, որոնք ծնած են անոր մեջ և անոր մեջ անցուցած են իրենց հոգին, զգուշությամբ իրենց անձերուն հոգ տարած են և իրենց անձերը որպէս օրինակ տված են այն հոտին, որ իրենց հանձնված է, անոնք միայն ապրած են ներքին գոհունակության հաղթանակը և երկնային վարձքը:

Մեր ժողովուրդը իր եկեղեցականը մեմանցուցած է հովիվի, որ կ'լուծի հոգևոր հովիվ: Այս գույգ բառերը բաւարար են հատկանշելու պաշտոնին վսեմությունը: Ան պետք է ըլլա համեստ, պարտաճանաչ, ուսյալ, ընթերցասէր և ծառայասէր: Առաքիւնությունները իր մեջ պետք է մարմնացած ըլլան: Քրիստոս ինքզինք կոչեց քաջ և բարի հովիվ, որ իր անձը գիտէ իր հոտին համար գոհել և տվալ փաստը Գողգոթայի վրա ինքզինք գոհելով մեր՝ իր հոտին փրկության և հաղթանակին համար: Ան, որ ինքզինքը Քրիստոսի մեջ մեղցնել գիտէ, ան, որ ինքզինք իր ժողովուրդի բարօրության համար մեղցնել գիտէ, ան պիտի վայելէ պտուղը հաղթանակին՝ հաւիտենական կյանքը:

Հոգևոր հովիվը կապականի հանրության, տառապողներու ցավին դարման պետք է տա, վիշտին՝ բալասան հայթայթէ, սգավորները մխիթարէ, անկարներուն օգնէ: Իր հետ պետք է տանէ շնորհք, օրհնություն և բարիք: Ան պետք է ըլլա սրտակից, խորհրդատու և մանաւանդ գորովագութ հայր:

Վաղորենք, որ Աստված Օշական արեւան այս շնորհներով լեցնէ և Սուրբ Հոգիով վերանորոգած, վերստին ծննդյան շնորհին արժանացուցած զինք «մշակ առանց ամօթոյ» դարձնէ և երբ իր ժամանա-



Տ. Վազգեն եպս. Քեչիշյանը օծում է նորընծայի ճակատը

կը հասնի, իր Հայրապետին, ապա իր Փրկչին կարենա ըսել. «Զհաւատսն պահեցի, զընթացսն կատարեցի» (Բ Տիմ. Դ 7):

Մենք այս առթիվ մեր որդիական խոնարհ սերն ու շնորհակալությունը կհայտնենք Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, մեզի շնորհած սույն պատիվին համար, որպես ձեռնադրիչ, և կաղոթենք ու կմաղթենք, որ մեր Սուրբ Եկեղեցվո մասը բազում ամոք առաջնորդե դեպի խաղաղության պայծառ ապագան:

Թող Աստված Սուրբ Հոգիի շնորքով լեցնե և առաջնորդե և՛ Արթուր Օշական արքեպիսկոպոսին, և՛ մեզ, և՛ ձեզ բոլորդ: Ամեն:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Գյուտ եպս. Նազգաշյանը և Ծվեդիայի հոգևոր տեսուչ գերաշնորհ Ս. Արսեն եպս. Բերբերյանը: Ս. պատարագին ներկա էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները:

Ս. պատարագից հետո Արթուր Օշականը առաջնորդվում է Վեհարան, որ տրվում է ճաշկերույթ: Ծաշկերույթի ժամանակ

Ս. Օշական քահանային ձեռնադրության առթիվ շնորհավորում է Վեհափառ Հայրապետը, տալով իր բարեմաղթությունները: Նորընծային շնորհավորում են նաև ներկաները: Վերջում շնորհակալության խոսք է ասում Ս. Օշական քահանան, Վեհափառ Հայրապետին և ներկաներին լրատահեցնելով, որ կլինի Հայ Եկեղեցու միության սպասավորը և իր կարողությունները ամբողջովին ի սպաս կղնի հայ ժողովրդի բարգավաճման ու գոյատևման սրբազան գործին:

Նույն օրը, երեկոյան, կատարվում են «Օրհնություն արեղայի» և «Օրհնություն վեղարի» կարգերը, և Ս. Օշական քահանա Գլուխույանին տրվում է վեղար՝ ի նշան կուսակրոն քահանայության:

\*  
\*  
\*

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Արթուր Օշականին, այն հույսով, որ նա անմնացորդ կերպով կմխրվի Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի ծառայության սրբազան գործին:

